Անուշավան Պետրոսյան

ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԵՍԵՐԸ ՐԱՖՖՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր - գերդաստան, վերապրուկ, փայտե շերեփ, ամրոց, փեթակ, ակնատ, չար աչք, գդակի պսակ, գլխագին, հարսի մեջքը պնդել, ափսե կոտրել:

«Դուք տվեք մեզ լավ մայրեր, մենք կտանք
ձեզ լավ որդիք, օտարացած կնոջից
կծնվեն օտար մարդիք»[1]:

Ավանդական ընտանիքի և ընտանեկան կենցաղի վերաբերյալ Ռաֆֆին /Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835-1888 թթ./ թողել է հարուստ և ուշագրավ նկարագրություններ, որոնք առ այսօր չեն արժանացել ազգագրագետների ուշադրությանը: Ծրջագայելով Արևմտյան, Արևելյան Հայաստանում և Պարսկաստանում, մոտիկից շփվելով գյուղական կենցաղին՝ նա գրի է առել իր տեսածն ու լսածը: Գրառած դաշտային ազգագրական նյութերը ցրված են Ռաֆֆու նամականիներում, պատմվածքներում, վեպերում, ակնարկներում, հիշատակարաններում և այլ կարգի գրառումներում[2]: Այդ նյութերը արժանահավատ են, ճշգրտված, արտահայտում են 19-րդ դարի հայոց և պարսկահայոց ավանդական կենցաղի իրական պատկերը: Ռաֆֆին հանդես է գալիս որպես բանահավաք ու ազգագրագետ՝ կորստից փրկելով հազարավոր ազգագրական ու բանահյուսական արժեքներ:

Հենվելով Ռաֆֆու հաղորդումների վրա և ելնելով հոդվածի սահմանափակ հնարավորությունից՝ համառոտակի կանգ կառնենք հայոց ավանդական ընտանիքին ու ընտանեկան ծեսերին՝ 19-րդ դարի երկրորդ կեսի կտրվածքով:

Ռաֆֆու ապրած ժամանակաշրջանում դեռևս պահպանվել էին դարերից եկող գերդաստանական վերապրուկները՝ ուրվագծելով ընտանիքի ընդհանուր պատկերը՝ արխայիկ մնացուկներով: Գյուղապետի ընտանիքը բավական մեծ էր,- գրում է Ռաֆֆին,- ինչպես իր բնակարանը, միասին էին ապրում մի քանի սերունդ. մեծ պապը, նրա որդիները, թոռները, թոռնայքը: Տան սրահում 20-ից ավել օրորոց էր ճոճվում, օջախը հարսներով, աղջիկներով պատանիներով լի էր: Տանուտերն իր տասնմեկ եղբայրների մեջ միջնակն էր, այդ թվի կեսի չափ քույրեր ուներ, նրա մայրը

---

[1] Ռաֆֆի, Նինո, ԵԺ 10 հատորով, հ. 8, Երևան, 1963, էջ 135:

[2] Տե՛ս Ա. Պետրոսյան, Ռաֆֆու պարսկական ուղևորությունները որպես պարսկահայերի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր, ՊԲՀ, 2007, թիվ 3: Նույնի՝ Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Երևան, 2012: Նույնի՝ Ազգագրական նյութերը Ռաֆֆու «Կայծեր» վեպում, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Պատմություն և մշակույթ», Երևան, 2014: Նույնի՝ Հայ բանարվեստը Ռաֆֆու աշխատանքներում, ԵՊՀ, աստվածաբանական ֆակուլտետի «Տարեգիրք» Թ, Երևան, 2014:

դեռ կենդանի էր, իսկ հայրը վախճանվել էր 105 տարեկանում: Բոլոր եղբայրներն ապրում էին անբաժան, մի հարկի տակ, կրտսերը խոնարհվում էր ավագին: Բոլորի վրա իշխում էր մեծ պապը՝ գերդաստանի հայրապետը: Աղախիններով ու սպասավորներով ընտանիքում 100 անդամ կլիներ[1]: Դա մի փոքրիկ պետություն էր՝ ընդգծված ներդաշնակությամբ: Ալեհեր պապերը՝ մի քանի եղբայրներ, և պառավներ դեռ կենդանի էին: Նրանց շրջապատել էին որդիները, թոռները, ծառաները, մի քանի սերունդ իրենց կանանցով ու զավակներով: Ընտանիքի գլուխ կանգնած է տարեցը, մեծ պապը, որին ենթարկվում են բոլորը, իսկ կանանց բաժինը ղեկավարում է մեծ տատը: Մեծ պապին փոխարինում է եղբայրներից ավագը, իսկ տատին՝ մեծ հարսը: Բացի պառավ տատից, մնացած կանայք զրկված են ձայնի իրավունքից, մինչև իսկ «խոսելն անգամ արգելված է»[2]:

Այս հակիրճ նկարագիրը գերդաստանական կենցաղի արժեքավոր վկայություն է, գեղարվեստական արձակի միջոցով հեղինակի տեսածի ու ընկալածի արտահայտություն:

Խոսելով գերդաստանում իր Շուշան տատի ունեցած իրավունքների մասին՝ Ռաֆֆին գրել է. «Մինչև մահ նա չթողեց ձեռքից իր կառավարման գավազանը, ահագին փայտյա շերեփը, որով նա ընթրիքի ու ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում: Մինչև նրա մահը, մեր տան մեծը թե փոքրը ամենայն խոնարհությամբ հպատակվում էին նրա հեղինակությանը»[3]: Ըստ Ռաֆֆու՝ օրհնյալ գերդաստանն արտացոլում է մեր արժանահիշատակ նախնիների առաքինի կյանքի բոլոր «անմեղ ու անզարդ պատկերը»[4]: Գերդաստանի, մեծ մոր տեղի ու դերի, հեղինակության խտացված և իրական պատկեր է վերոհիշյալ հաղորդումը:

Հոր կենդանության ժամանակ,- գրում է Ռաֆֆին,-որդիների մեջ բաժանում չի լինում, եթե որևէ մեկը խախտում է կարգը, նրան արտաքսում են ընտանիքից, առանց ժառանգության: Եղբայրներն ապրում են միասին, ամուսնանալով երեխաներ ու թոռներ ունենալով, գերդաստանը ստվարանում է: Այնուհետև, այն բաժանվում է 5-6 ընտանիքների: Հայրն իր կենդանության ժամանակ ձգտում էր դա հաշվի առնել, բնակարանը այնպես կառուցել, որ հեշտ կիսվեր[5]:

Այս հակիրճ հաղորդումներում Ռաֆֆին ներկայացնում է դեռևս պահպանված գերդաստանական վերապրուկները, նկարագրում մեծ ընտանիքի կազմն ու կառուցվածքը, նահապետի ու մեծ մոր գործառույթները: Ուշագրավ է, որ նա նման գրառումներն արել է այն ժամանակ, երբ մեզանում դեռևս ձևավորված չէր գիտական ազ-

---

[1] Ռաֆֆի, Կայծեր, հ. 5, Երևան, 1963, էջ 332-333:
[2] Ռաֆֆի, Հայ կինը, հ. 9, Երևան, 1964, էջ 319:
[3] Ռաֆֆի, Կայծեր, հ. 4, Երևան, 1963, էջ 216:
[4] Ռաֆֆի, Սալբի, հ. 1, Երևան, 1955, էջ 112: «Սալբիի հեղինակը,- գրում է Ռաֆֆին,- օտար չէր Պարսկաստանին, նա ծնվել ու սնվել է պարսկական մի գյուղի մեջ...տեսել է յուր ազգակիցների չարչարանքները, նորա ականջները միշտ լսել են արտասուքը և լացը» /նույն տեղում/:
[5] Ռաֆֆի, Գյուղական երիտասարդություն, հ. 9, էջ 400: Ըստ Ռաֆֆու յոթ ջրաղաց, յոթ օրվա հող, յոթ այգիներ, յոթ հոտ ոչխարներ և այլ որակումներից կարելի է եզրակացնել, որ մարդն ունեցել է յոթ որդիներ և այնպես է արել, որ յուրաքանչյուրը ստանա իր բաժինը: Եթե հայրը աղքատ էր, որդիները նրա մահից հետո ապրում և աշխատում էին միասին, հարստանում և նոր բաժանվում /նույն տեղում, էջ 401/: Ռաֆֆու այս մեկնությունը որքանով է համոզիչ, չգիտեմ, սակայն յոթ թիվը հայ ժողովրդական հավատալիքներում ունի խոր արմատներ, գալիս է ժայռապատկերներից /արև, լուսին և աչքով տեսանելի հինգ մոլորակներ/: Հետաքրքիր է, որ յոթ թիվը մտավ քրիստոնեական գաղափարախոսության մեջ որպես երջանիկ թիվ (մեր ավանդական հարսանիքները յոթ օր ու գիշեր տևելու իրողությունը):

գագրությունը: Դա բնորոշ է ոչ միայն Ռաֆֆուն, այլև մեր գրողների մեծ մասին, որոնց աշխատանքներում ընտանիքին ու ընտանեկան ծեսերին նվիրված գրառումները բավականին առատ են:

Պարսկահայերի ընտանեկան կենցաղի վերաբերյալ ուշագրավ վկայություններ է թողել Ռաֆֆին Պարսկաստան կատարած իր ուղևորությունների ժամանակ: Հյուրընկալվելով Սալմաստ գավառի Փայաջուկ հայկական գյուղում Ռաֆֆին գրել է. ինձ մոտեցավ տան հարսը, պղնձե ամանում լցված ջրով, ցանկանալով լվանալ ոտքերս: Չնայած Ռաֆֆին սկզբում ընդդիմանում է, սակայն լսելով, որ մերժումը վիրավորական կլինի ընտանիքի համար, համաձայնվում է: «Այդ նահապետական սովորությունը,- գրում է Ռաֆֆին,- զմայլեցրեց ինձ»[1]:

Հետաքրքիր է պարսկահայ ընտանիքում անդամների առանձին ճաշելու վերաբերյալ Ռաֆֆու հաղորդումները: Ճաշի ժամանակ Ռաֆֆին տանտիրոջ ամուսնացած և երեխաներ ունեցող զավակներին հրավիրում է սեղան նստել, հայրն ասում է. «Նրանք դեռ երկար պետք է սպասավորեն»: Նրանք համարձակություն չունեն նստել իրենց ծնողի մոտ, որին նայում են որպես գերդաստանի պատրիարքի, որի հեղինակությունը հասնում է անսխալականության[2]:

Հյուրընկալվելով Ուրմիայի Նախիջևան-Թափա հայկական գյուղում՝ Ռաֆֆին տվել է ներընտանեկան հարաբերությունների ամբողջական պատկերը: Երբ երեք անգամ հազալով արթնանում է սկեսրայրը, հարսը մոտենում է նրա անկողնուն, հագցնում շորերը, շտկում հողաթափերը, ջուր լցնում ձեռքերին, և ծերունին սկսում է աղոթքը: Չնայած իր տարիքին՝ սկեսրայրը անգործ չի մնում, մտնում է գոմը՝ անասուններին խնամելու: Պառավը թոնրի մեջ աթար է գցում, վառում, իսկ փոքր աղջիկները գնում են ջուր բերելու[3]: Նկարագրելով հյուրընկալ ընտանիքի նիստ ու կացը՝ Ռաֆֆին գրում է. «Ես գտնվում էի…նահապետական սրբարանի մեջ»[4]:

Ուշադրության արժանի են դևերի նկատմամբ ունեցած հավատքի վերաբերյալ Ռաֆֆու գրառումները: Երբ մատակների երամակը կատաղած վազում էր փողոցով ու դաշտերով,- գրում է Ռաֆֆին,- ծերունին դա համարեց Աստծո պատիժ: Դիմեց սրբերին, մատաղ արեց, աղքատներին հաց բաժանեց, քահանային վարձատրեց աղոթք ու պատարագ անել՝ կատաղած գոմեշներին հանգստացնելու համար: Սակայն այդ ամենը չօգնեց: Ծերունին լսել էր «իր ծերունի պապերից ու պառավ մամիկներից», որ դևերը սիրում են նստել ձիերի ու մատակների վրա ու քշել դաշտերով: Նա գրել տվեց «թելիսման» թղթեր, կարեց կաշվի մեջ և կախեց անասունների պարանոցից[5]: Երբ դա էլ չօգնեց, ծերունին մի կախարդ կնոջ միջոցով գտավ ելքը: Նա ոչ միայն հանգստացրեց իր անասուններին, այլև բռնեց դևերից մեկին: Իր մատակնե-

---

[1] Ռաֆֆի, Ճանապարհորդություն Պարսկաստանի, հ. 8, էջ 370-371: Հյուրի ոտքեր լվանալու կարգը կարծես Ռաֆֆուն անծանոթ է եղել: Գրավոր ու դաշտային նյութերի վկայությամբ, նույնիսկ հայկական գերդաստանների աննշան մնացուկների պայմաններում, այն բավական կենսունակ էր, գյուղական վայրերում հարատևեց մինչև 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի առաջին կեսը:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 371:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 233, 433:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 471: Ռաֆֆին մանրամասնորեն նկարագրում է ինչպես հայկական, այնպես էլ պարսկական ընտանիքներում առանձին ճաշելու սովորույթը որպես գերդաստանական վերապրուկ: Մինչև 20-րդ դարի կեսը այն նկատելի էր հատկապես գյուղական շրջաններում /տե՛ս Ա. Պետրոսյան, Ռաֆֆու պարսկական ուղևորությունները, էջ 110-111/:

[5] Ռաֆֆի, Սալբի, էջ 67:

ից մեկին թամբեց կարմիր համետով, նստելատեղին ձուլ քսեց, ամրացրեց կարթաձև ծայրերով պողպատե ասեղներ: Մի դևիկ աղջիկ նստելով համետին կպչում է դրան, իսկ ասեղները մտնում են մարմնի մեջ[1]: Նա չի կարողանում ազատվել, ծերունին բռնում է «ոգուն», պարանոցին հագցնելով պողպատե օղամանյակ, կողպեքով կողպում և տանում տուն: Նա մարդանման էր, միայն խոզի նման պոչ ուներ, ոտքերի կրունկները դեպի առաջ, թաթերը՝ ետ: Նա բարեխղճորեն անում էր բոլոր հանձնարարությունները և ծառայում ծերունու ընտանիքին: Սակայն հանձնարարություն տալիս պետք է հակառակ ասեին, որ կատարեր: Օրինակ, ջուր մի բեր, նա կբերեր և այլն: Անցան տարիներ, դևիկը ծերացավ, սակայն ոչ ոք չէր մտածում նրան արձակելու մասին: Դևիկին անվանում են **խլվլիկ,** որի մայրն ամեն Նավասարդի վերջին գիշերը գալիս էր ծերունու տան կտուրի վրա, լաց լինում, աղաչում էր իր աղջկան ազատել՝ խոստանալով փրկագին[2]: Ծերունու թոռներից մեկը որոշում է ազատել դևին, մի պայմանով, որ խլվլիկի մայրը նրան սովորեցնի ինչպես փրկել դիվահար եղածներին: Դևիկի մայրը մեծ դժվարությամբ համաձայնվում է թոռանը սովորեցնել «կախարդական ուսմունքի գաղտնիքը», պայմանով, որ ոչ մեկին չհայտնի: Ըստ ավանդության, դրանից հետո ծերունու տանիքի փոշին, հսկա ուռենիները իրենց էին ձգում հիվանդներին, տան առջևից հոսող **առուն ու բժշկական ծառերը** բուժում էին նրանց:

Ռաֆֆին առավել ամբողջական կերպով անդրադարձել է **ծննդյան ու հարսանյաց ծեսերին** ու արարողություններին: Դրանք աղերսվում են մարդկային հասարակության ամենավաղնջական փուլերին և անցնելով հազարամյակներով՝ լավ պահպանվել էին 19-րդ դարի երկրորդ կեսին, մինչև իսկ հասնելով մեր օրերը՝ որպես վերապրուկ: Իռացինալ բնույթի ծեսերն՝ ընդհանրապես, ընտանեկան ծեսերը՝ մասնավորապես, ընդգրկվեցին խորհրդային ազգագրության շրջանակներում 20-րդ դարի 50-60-ական թթ.: Հիմնավորվեց, որ այդ ծեսերն աղերսվում են էթնիկ հանրությունների ամենանախնական շրջանի հետ և կարող են հանդես գալ որպես սկզբնաղբյուր: Ընտանեկան ծեսերը կազմելով կենցաղ հասկացության մի հատվածը՝ անընդհատ փոփոխվել են, հարմարվելով ժամանակի պահանջներին: Պետք է ասել, որ դրանք բավականին կենսունակ են, որի շնորհիվ հիմնականում պահպանել են իրենց նախնական բովանդակությունը:

Անդրադառնալով Արևելյան Հայաստանի բնակչությանը՝ Ռաֆֆին գրում է, որ նրանք հիմնականում եկել են Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից, ունեն բարքերի, սովորույթների նկատելի տարբերություններ: Չնայած դրան՝ ընդհանուր գծերով պահպանել են իրենց «պատմական հատկանիշները»[3]:

---

[1] Ըստ հայ ժողովրդական հավատալիքների դևերը վախենում են պողպատից, որ կարող են բռնվել: Պատահական չէ, որ հայ կանայք պարանոցներին կրում են «պողպատե օղամանյակներ, իսկ ճկույթին՝ պողպատե մատանիներ, որպեսզի դևերը նրանց չվնասեն: Ծննդկանի մոտ դնում են պողպատե գործիքներ, որ ազատ մնան դևերի վտանգից» /նույն տեղում, էջ 68/:

[2] Նույն տեղում, էջ 69: Մինչև այսօր,- գրում է Ռաֆֆին,- հայերի և հատկապես պարսիկների մեջ պահպանվել է այդ սովորությունը: Նավասարդի վերջին գիշերը նրանք չեն քնում, երեխաներին ևս թույլ չեն տալիս քնել կամ մենակ մթի մեջ մնալ: Արթուն են պահում ողջ ընտանիքը: Երեխաներին վախեցնում են, թե խլվլիկը նրանցից վրեժխնդիր կլինի: «…դևի հիշատակը կենդանի պահպանված է հին պարսիկների զրույցների մեջ»: Մեզանում ճարտար և արագաշարժ մարդուն խլվլիկ են կանչում: Խլվլիկ-խնջիկի գերեզմանից հավաքած ջրով կամ հասարակ ջրով լողանում էին նրա գերեզմանի վրա /նույն տեղում, էջ 72/:

[3] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 319:

Հենվելով Ռաֆֆու հաղորդումների վրա՝ համառոտ կանգ առնենք հայերի և պարսկահայերի ընտանեկան ծեսերին:

Ա. Ծննդյան ծեսեր. Երեխայի ծննդից մինչև մկրտությունը,- գրում է Ռաֆֆին,- տևում է 8 օր: Եթե ծնվածը տղա է, պառավների մի խումբ ամեն ջանք ու եռանդ գործադրում է նորածնի կյանքն անվտանգ պահելու չարքերից, ալքերից, քաջքերից, դևերից, սատանաներից[1]: Ծնվածի չորս կողմը դնում են մերկ դաշյուններ, պողպատից շինված գործիքներ և հրացանից գնդակ արձակում[2]: Ամենևին էլ պատահական չէ, որ մանկան օրորոցը պատում են բժժանքներով, հուռութներով, մահեկներով, մինչև իսկ «տերտերի գրած **բլթիկներով**»: Մինչդեռ աղջկա օրորոցը զուրկ է նման **պահպանիչ** բաներից: «Աղջկա երեսը պինդ կլինի,- ասում է գյուղացին, եթե նրան ջրաղացի քարի տակ էլ գցես, էլի դուրս կգա»[3]: Աղջկան այնպես չեն վերաբերում, ինչպես տղային: Նա մնալով օրորոցում՝ այնքան է լաց լինում, որ ձայնը կտրվում է: Աղջիկ երեխան հաճախ օրորոց չի ունենում և մենակ մնալով՝ ընկնում է թոնիրը: Աղջկա մահվան դեպքում, կարծես «ավելորդ բանը հեռանում է ընտանիքից»: Ըստ Ռաֆֆու՝ «աղջիկը մանկուց հասկանում է, որ ինքը պահանջելու իրավունք չունի, քանի որ աղջիկ է»: Երբ աղջիկ երեխան սկսում է քայլել, մայրը համոզված է, որ «նա կպահի իր գլուխը», իսկ 7-8 տարեկանում պետք է մի բան սովորի, սակայն դպրոցներ չկան, ուստի աղջկան ուղարկում են այն կնոջ մոտ, որը հայտնի է **ուստա** անունով: Նա վարժուհու պարտականություն է կատարում, երեխային սովորեցնում «ազնիվ ու առաքինի վարք ու բարք», ինչպես նաև կարել, հյուսել ասեղնագործել[4]: Ավելի ուշ նրանց պատրաստածը մտնում է օժիտի մեջ: Ամեն վարժուհի ունենում է 5-10 աշակերտուհի: Մեծ է նրա հեղինակությունը և պատահական չէ, որ հարսանիքի ժամանակ վարժուհին փեսայի կողմից ստանում է հատուկ նվեր: Որպես կանոն, վարժուհիները լինում են հասուն կանայք: Սալբիի մայրը երեխային հանձնելով վարժուհուն՝ ասում է. «միսն առնին, ոսկրը թողնին, աչքը հանին՝ ափի մեջ դնին, որ խելոքանա, բան սովորի և օրինավոր կին դառնա»[5]: Երբեմն երեխաներին վարժուհիների մոտ չէին ուղարկում, այլ սովորեցնում էին տանը:

Ռաֆֆին անդրադարձել է աղջիկների դպրոց ուղարկելու խնդրին: Երբ «երեխայի կուրծքը բարձրանում է», դառնում 12-13 տարեկան, դպրոցից հանում են: Աղջիկը խիստ հսկողության տակ է լինում, ոչ մի շփում չի ունենում արական սեռի հետ: Չեր արգելվում խմբով ջուր կրել, կամ դաշտ մեկնել: Նրանցից պահանջում էին հնազանդություն, ամոթխածություն, պարկեշտություն[6]: Մի անգամ ինձ պատմեցին,- գրում է Ռաֆֆին, - որ աղջիկը չի խառնվում «դրսի գործերին», այլ պտտվում է «օջախի չորս կողմը»[7]: Ռաֆֆին հանգում է այն եզրակացության, թե մեզանում «աղջկան պահում

---

[1] Նույն տեղում, էջ 315:
[2] Ռաֆֆի, Սալբի, էջ 87:
[3] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 320-321:
[4] Ռաֆֆի, Սալբի, էջ 94:
[5]Նույն տեղում, էջ 103: Վարժուհուն ուղղված այս խոսքերին հանդիպում ենք հայ համքարություններում աշակերտ ընդունելիս: Երեխայի ծնողը վարպետին ասում է. «միսը քեզ, ոսկորը մեզ», վարվիր ինչպես կամենում ես, միայն երեխային սովորեցրու արհեստի գաղտնիքները: Երկու դեպքում էլ ծնողը պատրաստ էր ամեն ինչի, միայն թե երեխան ստանար անհրաժեշտ դաստիարակություն կամ սովորեր ընտրած արհեստը:
[6] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 323:
[7] Նույն տեղում, էջ 326:

են երկաթե վանդակի մեջ»[1], նա սիրո մասին մտածել չի կարող: Աղջիկներն ու տղաները հանդիպում են միայն հարսանյաց արարողությունների, ժողովրդական տոնախմբությունների /հատկապես՝ Զատիկի տոնի/, պարերի ժամանակ, սակայն աղջիկը կարող էր պարել միայն իր ազգականների հետ[2]:

Ռաֆֆին չէր կարող շրջանցել Պարսկաստանում հայտնի վարժուհու բնակարանը, քանի որ այն «պահում է իր մեջ մեր պապերի հին տների շինվածքի բոլոր ձևերը», որի մեջ նրանք անցկացնում են իրենց ցավալի կյանքը: Բնակարանի դռան առջև 2-3 թզաչափ բարձրությամբ լցված է կովի կուն /աղբը/, որ փողոցով անցնողների ոտքերի տակ պնդանալով՝ դառնար **տարթ /տորֆ/**[3], հետո կտրեն որպես թոնիրի վառելիք: Ներս մտնողն անցնելով այդ «գարշահոտ ճանապարհը»՝ հայտնվում էր վարժուհու բնակարանի նախագավթում: Հարավային կողմում գտնվում է **սրահը,** որտեղ ապրում են ամռանը: Սրահից մի դուռ տանում է **խրճիթ,** որտեղ անցկացնում են ձմեռը: Այս տան առաստաղը սևացած է ծխից: Գմբեթաձև բարձրանալով՝ ավարտվում է մի բոլորակ ծակով՝ երդիկով, որտեղից խրճիթի մեջ է ընկնում լույսը: Գետնի մեջ փորված թոնիրը վառում են ամեն օր, ծուխը «սև վիշապի պես» դուրս է գալիս երդիկից: Թոնիրի մեջ ճաշ են եփում և սեխի կորիզներից աղանձ անում[4]: Թոնիրի շուրջը փռված է երկու **փսիաթ** /կտոր/, որի վրա նստում են ծերունի ամուսինները և ոտքերը կախում թոնիրի մեջ: Եթե թոնիրի մեջ պատահաբար կատու է ընկնում, կանչում են քահանային՝ թոնիրը օրհնել տալու: Նա թոնիրի վրա **խաչալվա** ջուր է սրսկում և պատվիրում, որ 40 օր հետո միայն լավաշ թխեն[5]:

Շարունակելով վարժուհու բնակարանի նկարագրությունը՝ Ռաֆֆին ավելացնում է, որ խրճիթի վերևի մասում դրված էր **փեթակը՝** փայտյա մեծ արկղ[6], որի պահարաններում լցնում էին տան մթերքները, իսկ փեթակի վրա դնում անկողինները: Խրճիթի մի անկյունում դրված էր չորացած վառելափայտ, իսկ մյուս մասում մարագն ու գոմն էին, որտեղ կապված էին կովը, երինջն ու էշը: Էշին հումորով ասում էին տանուտեր, «Մկրտչի ոտքեր» և մաքրում քորոցով[7]:

---

[1] Նույն տեղում, էջ 327:

[2] Նույն տեղում, էջ 328:

[3] Ռաֆֆի, Սալբի, էջ 94-95: Խոշոր եղջերավոր անասունների կուից պատրաստում էին բասմա, որը մինչև աշուն մնալով ոտքի տակ՝ ամրանում էր, որոշ չափով չորանում: Այնուհետև, բասման կտրում են բահով՝ քառակուսիների ձևով, իրար հենում, որպեսզի լավ չորանան: Չորացած աթարից շարում են կառույց, որը հայտնի է ամրոց անունով: Ամրոցի պատերը շարելիս շարվածքի մեջ լցնում են աթարի մանր կտորներ: Ամրոցն ունենում էր փոքր դռնակ, որից հանում էին ներսում լցված աթարը և թոնիր վառում:

Վերջին տասնամյակներին կարծես խոշոր եղջերավոր անասունների աղբի մշակումն ու օգտագործումը մտել է իր նոր փուլը: Հայաստանի ցանկացած գյուղով անցնելիս այս պատկերը աչքի է զարնում՝ կրելով ընդհանրական բնույթ:

Ռաֆֆին կարծես հստակորեն չի զանազանում աթարն ու տարթը: Աթարը ստանում են վերոհիշյալ եղանակով, խոշոր եղջերավոր անասունների կկղանքից, մինչդեռ տարթը՝ մանր եղջերավոր անասունների կտտորներից, որի կալորիականությունը ավելի բարձր է:

[4] Նույն տեղում, էջ 95-96:

[5] Նույն տեղում, էջ 103:

[6] Փեթակը կավից կամ փայտից պատրաստված ամբար էր, որն ուներ առանձնացված մի քանի բաժիններ՝ ցորեն, ալյուր, սերմացու և այլ մթերքներ պահելու համար: Այն ծառայում էր նաև անկողինների ծալքերը դնելուն: Ամբարները ունեցել են լայն տարածում և կազմել հայ ավանդական բնակարանի կարևոր հատվածներից մեկը, որ պահպանվեցին մինչև 20-րդ դարի առաջին կեսը:

[7] Որպես կանոն ձիերին թիմարել են քորոցով, սակայն Ռաֆֆին հիշատակում է ավանակին էլ են թիմարել (տե՛ս Ա. Պետրոսյան, Ղազարոս Աղայանը կենցաղագիր ու բանահավաք, ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետի «Տարեգիրք» Դ, 2009, էջ 274):

Ռաֆֆու այս նկարագրությունը եզակի է ոչ միայն գեղարվեստական, այլև 19-րդ դարի երկրորդ կեսի մասնագիտական գրականության մեջ[1]: Հեղինակը չի շրջանցել այդ ոլորտով պայմանավորված որոշ հավատալիքներ: Պառավը չբավարարվելով իր կովի երկու պոզերի արանքում, ճակատի վրա երանկյան կաշվի մեջ կարած թղթեր կապելով՝ Համբարձման գիշերը կուժը լիքը ջրով տանում դնում էր թուրքերի գերեզմանոցում: Առավոտյան, առանց ետ նայելու և խոսելու, գնում բերում էր կժով ջուրը և դրանով հարում ձձումը: Արդյունքում «բոլոր մածունը կարագ էր կտրում»: Պառավը ձձումի կանթից կախում էր շորի մեջ կարած չորս տերև ունեցող մի քանի խոտ, որն ուներ **թելիսմանի պահպանիչ դեր[2]:**

Ռաֆֆին մանրամասնորեն անդրադարձել է անպտղաբերությանը /չբերություն/, որը բոլոր ժամանակներում կնոջ համար համարվել է դժբախտություն: Դա «նախատիք էր համարվում, Աստծո պատիժ»: Ամոլ կինը հեղինակություն չունի, նրա վրա նայում են որպես «չբեր կովի վրա»[3],- գրում է Ռաֆֆին:

Չբերության դեպքում ծնողները դիմում են սրբերին ու կախարդներին: Գյուղերում կարելի է տեսնել աղջիկների երկար ծամերի նման մազեր ունեցող տղաների, որոնք տաճարներին նվիրած մանուկներ են և լույս աշխարհ են եկել «սրբերի շնորհիվ»: Ամեն մի սրբից **շնորհված** մանուկը համարվում է նրա **ղուլը** /ճորտ/ և կրում է տվյալ սրբի անունը: Տղային յոթ տարի տանում են այդ սրբի մոտ, մատաղ անում, որպեսզի «ճորտին ազատեն ճորտությունից»: Այնուհետև կտրում են երեխայի մազերը[4]:

Սալբի վեպի հերոսներից վարպետ Պետրոսը որոշում է դառնալ ճգնավոր, սակայն շուտով թողնում է ճգնավորի կյանքը և ամուսնանում: Երեխա չունենալը բացատրում է նրանով, որ Աստված պատժեց իրեն «անապատը թողնելու և կյանք մտնելու համար»[5]: Իր անզավակ ընկերոջ հետ ուղևորվում են սուրբ Կարապետ՝ զավակ ունենալու ակնկալիքով: Երբ ուխտավորները սայլերով հասան Մուրատ գետին,- գրում է Ռաֆֆին,- իջան ձիերից, և «…բոբիկ ոտքերով, արտասունք թափելով, աղոթք մրմնջալով, երկրպագություն տալով գնացին վանքը»[6]: Վարպետ Պետրոսը երազ է տեսնում, որ մի ծերունի նրան է տալիս երկու խնձոր, մեկը իրեն, մյուսը իր հետ ուխտ մեկնած ընկերոջը՝ Ավետիսին: Իր խնձորի վրա Պետրոսը կարդում է **Սալբի** անունը, իսկ ընկերոջ խնձորի վրա՝ **Հովհաննես:** Երազում երևացողը սուրբ Կարապետն էր, իսկ տղա և աղջիկ անունները նշանակում էր, որ նրանց ուխտը կատարվեց: Թող մեր հավիտենական բարեկամությունը լինի խնամիությունը,- ասում են նրանք: Խնձորի վրա գրված Սալբի (նոճու ծառ) և Հովհաննես անունները ցույց են տալիս, որ կծնվեն տղա ու աղջիկ: Այսպիսով, իրականացավ նրանց ուխտը, մատաղ արեցին ու բաժանեցին աղքատներին: Օրորոցում նշանեցին Սալբիին և Հովհաննեսին, որին տվեցին Ռոստամ անունը[7]:

---

[1] Ըստ հեղինակի՝ պարսկահայոց գյուղերի բոլոր տները կից են միմյանց, տանիքների վրայով կարելի էր անցնել գյուղի մի ծայրից մյուսը: Այդ տների պատերի մեջ կային ծակեր, որոնց միջոցով, առանց տանից դուրս գալու, լուրը տեղեկացնում էին բոլորին: Դա պատահական չէր, թշնամու վտանգն էր մարդկանց ստիպել «սեղմվել միմյանց,…սերտ գրկել միմյանց» /տե՛ս Ռաֆֆի, Սալբի, էջ 373/:

[2] Նույն տեղում, էջ 98:

[3] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 381:

[4] Ռաֆֆի, Գյուղական երիտասարդություն, էջ 381:

[5] Ռաֆֆի, Սալբի, էջ 72:

[6] Նույն տեղում, էջ 80:

[7] Նույն տեղում, էջ 84-85:

Ռաֆֆու վկայությամբ հայ գյուղացին պարծենում էր իր զավակներով, կինը ինչքան շատ երեխաներ է ունենում, այնքան բարձրանում է նրա կշիռը ընտանիքում: «Ես տասը տղամարդի մայր եմ» խոսքերը հաճախ կարելի է լսել[1]: Երբ երեխան հիվանդանում է, նրան եկեղեցի չեն տանում, այլ **խորհուրդը** կատարում են օջախի /թոնիրի/ մոտ: Երեխային դնում են խմորի տաշտի մեջ, մկրտում և այդ ջրով ցողում ողջ տունը[2]: Երեխայի հիվանդությունը վերագրում են **չար աչքին:** Այն կոտորակելու նպատակով խմորից պատրաստում էին փոքրիկ գնդեր ու գցում կրակը: Խմորի գնդիկները տրաքում էին «չար աչքն էլ հետը»: Եթե դա չէր օգնում, ասում էին **չարից** է և դիմում այլ միջոցների. տարեց կինը ձվի վրա սև հավի արյունով գրում էր ինչ-որ բան և թողնում գերեզմանատան ճանապարհին: Այն հարցին, թե դա ինչու չի անում երեխայի հայրը, որը հայտնի էր կախարդության մեջ, երեխայի մայրը պատասխանում է. «մարդը իր մեռելը չի կարող թաղել», որ ծնողների «թղթերը» չեն ազդում զավակների վրա: Այդ պատճառով էլ մեկ ուրիշին են գրել տալիս: Այն յոթ աղբյուրների ջրով լցված թասի մեջ տրորեցին, գիշերը **աստղունք** դրին, իսկ առավոտյան խմեցրին երեխային: Երբ դա չոգնեց, հարևանները խորհուրդ տվեցին առավոտյան ժամ ու պատարագ պատվիրել, աղքատներին հաց բաժանել՝ շահելով սրբերի բարյացակամությունը[3]: Սալբիին բուժելու նպատակով նրա վրա **ալրմաղի** մեջ ավետարան բացեցին, աղոթք կարդացին, **ջրով խաչալվա** արին, ջուրը շաղ տալով հիվանդի վրա: Մի քանի շաբաթ հետո Սալբիի տկարությունն անցավ[4]: Երեխային **կպած չար աչքը** վերացնելու նպատակով,- գրում է Ռաֆֆին,- պառավը վերցրեց մի կտոր ածուխ, գծեց երեխայի ճակատին, այտերին, սրտին ու պորտին երկուական խաչ արեց, իսկ ձեռքին՝ մեկ: Թասի մեջ ջուր լցրեց և երեխայի գլուխը թեքեց ջրի վրա[5]:

Ռաֆֆու գրական ժառանգությունում սփռված ծննդյան ծեսերի համառոտ քննարկումից ակնհայտ է դառնում, որ հեղինակը լավ էր հասկանում նման նյութերի կարևորությունը, ուստի իր ստեղծագործություններում դրանք չի շրջանցել: Ըստ որում, առանձնացրել է արևմտահայ, արևելահայ և պարսկահայ հատվածների ծննդյան ծեսերի ինչպես ընդհանրական հիմքերը, այնպես էլ առանձնահատկությունները:

Բ. Ամուսնական և հարսանեկան ծեսեր. Ամուսնական և հարսանեկան ծեսերն ու արարողությունները Ռաֆֆին գրի է առել արևելահայերից ու պարսկահայերից: Չնայած ծիսաշարը շարադրել է հակիրճ, սակայն բերված ազգագրական նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Գրողի վկայությամբ ամուսնությունները հիմնականում արվում են ծնողների կողմից՝ հավասարը հավասարի հետ սկզբունքով: Բանակցությունները սկսվում են փեսայի հոր նախաձեռնությամբ՝ պատգամախոսության միջոցով: Մինչև համաձայնվելը աղջկա հայրն իրեն «բավական խնդրել է տալիս»: Ամենուրեք տարածված էր պատգամախոսներին մի քանի անգամ մերժելը՝ աղջկա կշիռը բարձրացնելու նպատակով: Աղջիկներին ամուսնացնում են 15 տարեկան հասակում, գյուղացին համոզված էր, որ «աղջիկը այն տեսակ պտուղ է, որ հաս-

[1] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 320:
[2] Ռաֆֆի, Գյուղական երիտասարդություն, էջ 381:
[3] Ռաֆֆի, Սալբի, էջ 89:
[4] Նույն տեղում, էջ 93-94:
[5] Նույն տեղում, էջ 106:

նելու ժամանակ փչանում է», ուստի պետք է նրան վաղ ամուսնացնել[1]: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ պարսիկներն ամուսնացած կնոջը հարեմ չէին տանում, ընտրում էին կույս աղջիկների:

Աղջկա հայրը «լավ» փեսացուին չկորցնելու նպատակով իր անչափահաս աղջիկը տալիս էր մի չափահաս մարդու կամ իր 15 տարեկան աղջիկը «ամուսնացնում» չորս տարեկան տղայի հետ: Երբեմն աղջկան նշանում են օրորոցում /դա հանրահայտ օրորոցախազն է/, իսկ երբեմն էլ՝ մոր արգանդում: Տղայի հայրը ընկերոջը կամ հարևանին ասում է. «Եթե քո կինը աղջիկ ծնե, նա պետք է իմ որդու հարսը լինի»[2]: Շատ դեպքերում երկու ընտանիքների միջև թշնամանքը վերացնելու նպատակով աղջիկ-տղա են ամուսնացնում: Հայերի մեջ ընդունված այս կարգի մասին ինչպես գրավոր ազգագրական, այնպես էլ դաշտային նյութերում բավական շատ են վկայությունները:

Ռաֆֆին գրում է, թե մի սյունեցի պատմում էր, որ ինքը Ղարաբաղում ականատես է եղել, թե ինչպես են աղջկան պսակել **գդակի** վրա: Սկզբում ինձ ծիծաղելի և անհավանական թվաց նրա պատմածը, սակայն երբ նա բացատրեց դրա պատճառները, ես համոզվեցի: Երբեմն տղան մեկնելով պանդխտության և չկարողանալով մասնակցել հանդեսին, ուղարկում էր իր գդակը: Այն հագցնում են ձողի ծայրին, հարսի հետ տանում եկեղեցական պսակադրության և կատարում ամուսնական խորհուրդը: Դա պատահական չէր, գդակը գլխի կամ անձի նշանակություն ուներ: Այս գաղափարն իր արտահայտությունն է գտել հայկական մի շարք անեծքներում. գդակը քեզ հարամ լինի, գդակդ թաղեմ, գդակդ արյունով տեսնեմ և այլն[3]:

Գյուղական հարսանիքներում հաճախ ականատես եմ եղել,- գրում է Ռաֆֆին,- երբ մեկին դուրս էին կանչում, նա գդակը դնում էր իր տեղը, որ նշանակում էր իբրև թե ինքը ներկա է հանդեսին: Երբ որևէ մեկի մոտ գործով մարդ էին ուղարկում ինչ որ լուր կամ բան ստանալու, նա ասում էր. «Եթե չես հավատում, տես հորս մորուքի սանրը: Շատերը սանրի փոխարեն մորուքից մի մազ էին ուղարկում»[4]:

Անհատական հարսանիքը կրում էր հասարակական բնույթ: Աղջկա հոր ստացածը համարյա հանում էր հարսանիքի ծախսերը, իսկ փեսայի հայրը ստանում էր նվերներ՝ ազատվելով շատ հոգսերից[5],- գրում է Ռաֆֆին:

Գրողը առավել հանգամանորեն կանգ է առել Ատրպատականի հայերի հարսանյաց արարողակարգի վրա: Հարսի ընտրությունը մեծ մասամբ կատարվում էր զույգի ծնողների կողմից: Փեսայի հայրը մի քանի ծերերի հետ գնում էր աղջկա տուն **քասըմաթ** անելու, այսինքն աղջկա կողմի հետ համաձայնության գալու, թե որքան բաշլըղ /գլխագին/ կամ դրամ պետք է տա փեսայի հայրը: Դրանից բացի տալիս էին նաև գինի, միս, յուղ ու բրինձ: Մորթում են մեկ-երկու եզ, հարս ու աղջիկ պարում են, իսկ մասնակիցները բաժակ բարձրացնելով՝ ասում են՝ շնորհավոր լինի: Մի աղջիկ սկուտեղով հինան տանում է հարսի տուն, տեղի է ունենում հարսանիքի պարահանդեսը: Հարսին պարի են հրավիրում՝ գլխին գցելով երկու լավաշ: Պարից հետո աղջիկ-

[1] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 328-329:
[2] Նույն տեղում, էջ 329:
[3] Նույն տեղում, էջ 329:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 331:

ները լավաշը բաժանում են իրար մեջ, որ «հարսանիքի թագն ու պսակը» իրենց էլ հասնի[1]:

Աղջիկն ամուսնանալով,- գրում է Ռաֆֆին,- կորցնում է իր ազատությունը, ընկնում անծանոթ միջավայր: Հաճախ նույնիսկ փեսային նոր է տեսնում, այն էլ գիշերով, փեսայի հետ կարող է խոսել, երբ մենակ են լինում: Ռաֆֆին անդրադառնում է չխոսկանության խնդրին, որը կրել է համահայկական բնույթ: Հարսը, բացի երեխաներից, տան մյուս անդամների հետ շփվում է շարժումների (ժեստերի) միջոցով: Եթե հայրական տանը նրա երեսը բաց էր, ամուսնանալով՝ դեմքը ծածկվում էր: Չորս պատերն էին նրա աշխարհը, բերանը փակ, երեսը ծածկված թանձր քողով, դեմքը ոչ մեկին ցույց տալ չէր կարող[2]: Յոթ տարի անց չխոսկանությունը վերանում էր: Հասակավոր կանայք «հարսի քողը փոխում էին»: Կարմիր քողի փոխարեն նրա երեսին գցում էին սպիտակ քող: Հարսը կարող էր երեսը կիսով չափ բաց անել և ընտանիքի որոշ անդամների հետ խոսել /բացի ամուսնու ծնողներից/: Դա կատարվում էր այն ժամանակ, երբ հարսը դառնում էր մի քանի երեխաների մայր: «Կարճ ասած,- գրում է Ռաֆֆին,- կինը միայն այն ժամանակ է հասարակության անդամ դառնում, երբ պառավում է»[3]: Հարսը մտնելով փեսայի ընտանիք՝ նրա մորը փոխարինում էր կեսուրը: Հարսն ամբողջ օրը ոտքի վրա էր՝ կատարելով սկեսրոջ հանձնարարությունները, անկողին էր մտնում բոլորից ուշ: Ամուսինը,-գրում է Ռաֆֆին,- «վարվում էր կնոջ հետ անգթությամբ, որպես իր վարող եզան կամ գոմեշի հետ»[4]:

Ռաֆֆին անդրադառնում է նաև ընտանիքում պահպանված մի շարք արգելքների. զրույցի ժամանակ կինը ամուսնու անունը չէր տալիս, ասում էր **նա** կամ Ստեփանի /երեխայի/ հայրը: Ամուսինը ևս կնոջը անունով կանչել չէր կարող, դիմում էր, Խաչոյի աղջիկ խոսքերով[5]:

Ռաֆֆին որոշ նկարագրական ակնարկներ ունի Երևանի նահանգի կանանց մասին, որոնք աշխույժ մասնակցում են բամբակի մշակման, հավաքման, այգեգործության, բանջարանոցային մշակույթների աշխատանքներին: Մեծ է կնոջ դերը անասնապահության և երկրագործության մեջ, իսկ լեռնային գոտիներում կինը հովիվ է և տարբերվում է հովտային շրջանների կանանցից[6]:

Ռաֆֆին չէր կարող շրջանցել օժիտի խնդիրը: Օժիտը դեռևս մտած չլինելով մեր գյուղերում, նպաստում էր աղջիկներին շուտ ամուսնացնելուն: Ըստ գրողի՝ շատ տեղերում մնացել է այն սովորությունը, որ աղջկա հայրը փոխանակ ինքը տալու, փեսայի կողմից ստանում է դրամ կամ մթերք: Դրա մեջ շատերը տեսնում են, թե «հայրը վաճառում է իր աղջկան»,- գրում է Ռաֆֆին: Դա ամենևին էլ այդպես չէ, այդ գումարը աղջկա հայրը ծախսում է հագուստ կամ այլ ապրանք գնելու համար՝ հետո այն տանելով փեսայի տուն[7]:

---

[1] Ռաֆֆի, Սալբի, էջ 185:
[2] Ռաֆֆի, Կայծեր, հ. 4, էջ 216:
[3] Ռաֆֆի, Հայ կինը, էջ 331:
[4] Նույն տեղում, էջ 332:
[5] Նույն տեղում, էջ 333: Դա ընդհանրական է եղել հայկական ավանդական ընտանիքներում և ինչ որ չափով պահպանվել է մինչև 20-րդ դարի 20-30-ական թթ.:
[6] Նույն տեղում, էջ 335:
[7] Նույն տեղում, էջ 330:

Ուշագրավ է, որ Ռաֆֆին 19-րդ դարի երկրորդ կեսին գրելով այս խոսքերը, փաստորեն մերժում է գլխագնի գոյությունը մեր հարսանիքներում և հիմնավորում, որ տղայի կողմից ստացված միջոցները մտնում էին օժիտի մեջ և կրկին վերադարձվում տղայի ընտանիք: Այս ձևակերպումը հստակեցվեց խորհրդահայ ազգագրական գիտության մեջ միայն հարյուր տարի անց, 20-րդ դարի կեսին:

Որպես կանոն, հայոց հարսանիքները տեղի էին ունենում գյուղատնտեսական աշխատանքներն ավարտելուց հետո, մինչև Մեծ պասի սկիզբները: Հարսանյաց ավանդական ծիսակարգը ինչպես հայերի, այնպես էլ պարսկահայերի մեջ տևում էր յոթ օր ու գիշեր, յոթը թիվը համարվում էր երջանկություն և հաջողություն բերող[1]:

Հարսին հագցնելու արարողակարգը կատարում էր վարժուհին, որը ամոթխածության քողը գցելով հարսի վրա, ասում էր. «Քո դեմքը թող չտեսնեն չար աչքերը», որից հետո նրա երեսը մինչև մահ մնում էր ծածկված: Ըստ Ռաֆֆու հարսի «մեջքը պնդում էին փեսայի հոր՝ գերդաստանի նահապետի գոտիով»[2]:

Ռաֆֆին անդրադառնում է հարսի կողմից օջախը թողնելու, հարսանիքի ժամանակ հարսի գլխին քաղցրավենիք շաղ տալու, հարսի, փեսայի գրպաններում մեկական կողպած կողպեք դնելու, փեսայի կողմից ափսեներ կոտրելու արարողություններին: Ըստ Ռաֆֆու, ափսեներ կոտրելով՝ փեսան կոտրում էր իր «կենակցի կամակորությունը», որից հետո կինը դառնում էր նրա հպատակն ու ստրուկը[3]:

Ակնհայտ է, որ պարսկահայերի հարսանիքը համահայկական հիմք ունենալով հանդերձ՝ առանձին փուլերում հանդես է գալիս նկատելի շեղումներով ու ինքնատիպությամբ[4]:

Այսպիսով, Ռաֆֆու գրական ժառանգությունում սփռված վկայությունները հայոց ավանդական ընտանեկան ծեսերի ու արարողությունների վերաբերյալ ունեն աղբյուրագիտական արժեք, որոնք հեղինակը ձեռք է բերել տարբեր հարցումների միջոցով, շատ դեպքերում ականատես լինելով տվյալ ծեսին կամ արարողությանը: Սակայն Ռաֆֆու ազգագրական ժառանգությունն ընդհանրապես և ընտանեկան ծեսերի վերաբերյալ գրառումները՝ մասնավորապես, տասնամյակներ շարունակ շրջանցվել է հայ ազգագրության կողմից, ուստի գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

---

[1] Ռաֆֆի, Ճանապարհորդություն Պարսկաստանի, էջ 451: Պարսկահայերի հարսանիքի յոթ օրվա խորհրդին անդրադարձել է Ռաֆֆին՝ համառոտ կերպով առանձնացնելով ամեն օրվա նախապատրաստական աշխատանքները:

[2] Նույն տեղում, էջ 453: Ավանդական հարսանյաց ծեսերում, որպես կանոն, հարսի շորերը հագցրել է քավորկինը, իսկ գոտին կապել քավորը: Սակայն հարսի մեջքը փեսայի հոր գոտիով պնդելը հայոց հարսանիքներում չի հանդիպում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 454:

[4] Պարսկահայերի հարսանյաց ծեսերի ու արարողությունների ամբողջական նկարագիրը տե՛ս Ա. Պետրոսյան, Ռաֆֆու պարսկական ուղևորությունները, էջ 111-113:

Анушаван Петросян, Армянская традиционная семья и семейные обряды в литературном наследии Раффи, - Они разостланы в художественной прозе автора, эпистолярных произведениях, очерках, рассказах и записях иного порядка, которые, однако, остались вне внимания этнографов. Раффи описывал сохранившиеся среди персидских армян и западных армян фамильные пережитки, состав семьи, разделение труда, функции патриарха и домохозяйки (тантикин).

Из семейных церемоний Раффи обратил внимание рождественским и свадебным обрядам. Давал описание церемониям калыма, приданого, венчания с шапкой, опоясывания невесты, разбивания тарелки, омовения ног гостя и пр. Подобные записи имеют источниковедческое значение и пускаются в оборот впервые.

Anushavan Petrosyan, Armenian Traditional Family and Family Traditions in Raffi's Literary Heritage, - Materials on them are spread in the writer's prose, letters, reviews, stories and other notes, which were not paid attention to by ethnographers. Raffi has described family remnants of Western Iranian-Armenians, family composition, the separation of work, forefather and grandmother functions.

From among family traditions Raffi has referred to before, main and after birth stages, rational and irrational ways of children cure, he has also referred to before, main and after marriage stages. He has given the description of dot, white cap crown, caressing bride's back, breaking plates, washing guest's legs, and other traditions. Such notes have source value, and are put in usage for the first time.

Անուշավան Պետրոսյան - պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ: